ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 062/2015-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.08.2015թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի հաստատած կողմից հաստատված Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2015թ. ուսուցման ծրագիրը (հիմք՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 18.06.2015թ. թիվ 15/9-12-15 գրությունը) և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անցկացման կարգը (հիմք՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 29.06.2015թ. թիվ 15/29-3-15 գրությունը), ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1405-Ա հրամանը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**